ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻՑ ԱՐՄԱՎԻՐԻ, ԱՐՏԱՇԱՏԻ, ԴՎԻՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ 00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

САМУЭЛЯН АРЕВ АРУТЮНОВНА

ВОПРОСЫ АРХИТЕКТУРНОЙ ОРГАНИЗАЦИИ ОХРАНЫ И МУЗЕЕФИКАЦИИ ИСТОРИЧЕСКИХ СТОЛИЦ АРМЕНИИ: АРМАВИРА, АРТАШАТА, ДВИНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01 - «Архитектура и архитектурный дизайн»

ЕРЕВАН 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
Յու.Ա.ՍԱՖԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ.դոկտոր, պրոֆ. **Դ.Գ.ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ**
ճարտ.թեկնածու **Ա.Ա. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2019թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈԿ-ի «Ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք.Երևան, Տերյան փող., 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցեն՝ 0079, ք Երևան, Մառի փող., 17/1

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2019թ, նոյեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ ճարտ.դոկտոր, դոցենտ
Ս.Ա.ԹՈՎՄԱՍՅԱՆ

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: доктор архитектуры, профессор
САФАРЯН Ю.А.

Официальные оппоненты: доктор архитектуры, проф. **КЕРТМЕНДЖЯН Д.Г.**
кандидат архитектуры **ТЕР-МИНАСЯН А.А.**

Ведущая организация: **Институт искусств НАН РА**

Защита состоится 26-го декабря 2019г. в 14:00 часов на заседании специализированного совета 030 – “Архитектура и строительство” ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА), по адресу: 0009, г.Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 16-го ноября 2019г.

Ученый секретарь специализированного совета: доктор архитектуры, доцент
ТОВМАСЯН С.А.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է Հայաստանի պատմական մայրաքաղաքներ Արմավիրի, Արտաշատի և Դվինի պահպանության և վերջիններիս թանգարանացման ճարտարապետական կազմակերպման հիմնախնդիրների վերհանմանը, որոնք կարոտ են հրատապ լուծման, ինչպես նաև՝ մի շարք անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման: Մերօրյա աշխարհում նման միջոցառումների գիտական հիմնավորումն ու կազմակերպումն ունի արդիական համատեքստ՝ հնավայրերի պահպանության, դրանց վերազարթոնքի, նորովի օգտագործման և մասնավորապես՝ թանգարանացման տեսանկյունից:

Ինչպես իրավացիորեն փաստում է ամերիկյան դեկոնստրուկտիվիզմի վառ ներկայացուցիչներից մեկը՝ Ֆրենկ Գերին, «Ճարտարապետությունը պետք է խոսի իր ժամանակի և տարածության խորքից, սակայն ձգտի հավերժության»: Անդրադարձը պատմական հնավայրերին, դրանց ամրակայմանն ու թանգարանացման ճարտարապետական կազմակերպմանը, որը ներառում է մի շարք հիմնախնդիրներ՝ ունի կարևորագույն ու անհրաժեշտ նշանակություն: Թեմայի ուսումնասիրության համատեքստում ուշարժան է դիտարկել Հայաստանի պատմական մայրաքաղաքների օրինակները: Դրանց ճարտարապետությունը խոսուն վկան է ժամանակի և տարածության, իսկ վերջիններիս հնագիտական հուշարձանների, ինչպես նաև պատմական բնակավայրերի պահպանությունն ու թանգարանացումը այն գործոնն է, որը կապահովի այդ մայրաքաղաքների հավերժությունը:

Հայաստանի Հանրապետության հնագիտական հուշարձանների զգալի մասն այսօր վտանգված է ոչ միայն բնածին գործոնների քայքայիչ ազդեցությունից, այլև մարդածին՝ տարածքի խիտ բնակեցման, տնտեսական գործունեության, հողօգտագործման և բազմաթիվ այլ գործոնների պատճառներով: Մշակութային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է տնտեսական կամ այլ բնույթի գործունեության հետևանքով վտանգված կամ անխուսափելի կործանման ենթակա հուշարձանների դաշտային հետազոտությունների իրականացումը: Վերջին տարիներին լուրջ խնդիր են հնագիտական հուշարձանների պահպանության բնագավառում արձանագրված իրավախախտումները՝ գանձագողությունը, հնավայրերի տարածքում անօրեն թաղումները: Այս խնդիրները անհապաղ լուծում կարող են ստանալ միայն հատուկ պահպանվող տարածքների՝ արգելոց-թանգարանների ստեղծմամբ:

Վերոնշյալը ենթադրում է ատենախոսության առարկայի ***արդիականությունը***: Բացի այդ՝ հայտնի է, որ յուրաքանչյուր հասարակության մշակութային ժառանգության ուսումնասիրման, պահպանության, հանրահռչակման, օգտագործման խնդիրներն անհնար է լուծել առանց պատմական վայրերի արժևորման:

Աշխատության արդյունքներն առաջին հերթին արժեքավոր նշանակություն ունեն մշակութային ժառանգության պահպանության ոլորտի համար:

Ներկայացվող աշխատությունն ***կիրառական նշանակություն*** ունի հնագույն ու միջնադարյան քաղաքատեղիներով զբաղվող պետական և մասնավոր կառույցների, թեմայով զբաղվող հետազոտողների, գիտական, գիտարտադրական, գիտակրթական ու գիտաճանաչողական գործունեություն ծավալող ոլորտների համար:

Ուսումնասիրության արդյունքները հնարավոր է ներդնել նորմավորման և օրենսդրական բնագավառներում, ինչպես նաև ճարտարապետության տեսության և պատմության ոլորտում:

Ուսումնասիրության առարկան հնագիտական ժառանգության կարևորագույն մաս կազմող Արարատյան դաշտավայրի պատմական երեք մայրաքաղաքների (Արմավիր, Արտաշատ, Դվին) պահպանության, թանգարանացման ճարտարապետական և քաղաքաշինական սկզբունքներն ու ձևերն են: Հետազոտվում է քաղաքատեղիների հնագիտական, քաղաքաշինական, ամրաշինական, ճարտարապետական, մշակութային հարուստ ժառանգությունը, ուսումնասիրվում են նաև ամրակայման և վերականգնման ժամանակակից մեթոդներն ու դրանց ամբողջ բազմազանությունը՝ տիպաբանություն, հորինվածք, շինարվեստ և այլն:

Աշխատության նպատակն է Հայաստանի պատմական մայրաքաղաքներ Արմավիր, Արտաշատ, Դվինի պահպանության և թանգարանացման ճարտարապետատարածական կազմակերպումն ու մեթոդաբանության մշակումը՝ դրանց փաստավավերագրական և օրենսդրական հենքի վրա:

Խնդիրներն են՝

1. տարածքների պատմական տեղեկատվության հավաքագրումը, քաղաքաշինական և ճարտարապետական փաստագրումը;
2. ամրակայման և վերականգման միջոցառումների հայեցակարգի մշակումը;
3. հուշարձանապահպանության՝ գոյություն ունեցող նորմերով և մեթոդներով նշյալ տարածքների գիտական և զբոսաշրջային այցելությունների նախապատրաստումը և թանգարանացումը, ինչպես նաև մշակութային ժառանգության դերի ու նշանակության արժևորումը;
4. Արարատյան դաշտի պատմական երեք մայրաքաղաքների թանգարանացման սկզբունքների ու հայեցակարգի մշակումը;
5. ոլորտի պահպանության օրենսդրական բարեփոխումներ առաջարկները:

Ուսումնասիրված գրականության վերլուծություն իրականացնելով, փաստենք, որ հուշարձանների թանգարանացման թեմայով կան ընդամենը մի քանի հոդվածներ, որոնք էլ ճարտարապետական տեսանկյունից միանգամայն թերի են:

Ներկայացվող աշխատության մեջ հուշարձանապահպանության առաջադրված սեղմ դրույթները հիմնականում վերանայում են արշավախմբերի հավաքագրած տեղեկատվությունը, հայկական

քաղաքաշինության վերաբերող ուսումնասիրությունները, հուշարձանատա-ռածքների թանգարանացման տեսությունները, հուշարձանների պահպանության ակտերն ու միջազգային կոնվենցիաները:

Հնավայրերի թանգարանացման վերաբերյալ առկա հայկական հրատարակությունները սակավաթիվ են, այդուհանդերձ հնարավոր է եղել աշխատանքում լրացնել այդ բացը՝ դիմելով քննվող բնագավառի մի շարք օտար աղբյուրների ու հրատարակությունների զուգահեռներին, որոնք զետեղված են աշխատության գրականության ցանկի էջերում:

Աշխատանքի գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ այստեղ առաջին անգամ փորձ է արվում պատմագրական, հնագիտական, տեղագրական և այլ ուսումնասիրությունների տվյալների հենքի վրա վերակազմելու հայոց պատմական երեք մայրաքաղաք-քաղաքատեղիների քաղաքաշինական կառուցվածքը՝ ըստ պատմական հիմնական փուլերի, պատկերելու դրանց շարունակական զարգացման դինամիկան և փոխկապակցվածությունը:

Առաջին անգամ ցուցաբերվում է հայեցակարգային միասնական մոտեցում շուրջ հազար հինգ հարյուր տարվա շարունակական զարգացում ունեցող քաղաքատեղիների նկատմամբ:

Սույն աշխատությամբ Հայաստանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում հնագիտական հուշարձանների, քաղաքատեղիների թանգարանացման մեթոդաբանությունը՝ ներառելով պատմականորեն ձևավորված միջավայրն ու բնապատկերը:

Աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական մերօրյա միջավայրը նոր մարտահրավերներ է ներկայացնում մշակութային ժառանգության բնագավառի կայուն և բնականոն զարգացմանը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի լարված մթնոլորտում արդիական խնդիրներից է մշակույթի՝ որպես տնտեսական ռեսուրսի, դիտարկման բացակայությունը կամ նվազ մակարդակը, հատկապես համաշխարհային մշակութային ժառանգության բազմազան և հարուստ շտեմարանում հայկական մշակույթի սակավ ներկայացվածությունը, ինչի արդյունքում պատշաճ չի ուրվագծվում հայկական մշակույթի տեսանելի զարգացման հեռանկարը:

Ժամանակագրական առումով աշխատության դիտակետում են հայկական անտիկ, միջնադարյան ժամանակաշրջանները, որոնք ձգվում են ուրարտական շրջանից (Ք.ա. 6-րդ դարից) դեպի հայկական հելլենիզմ և հռոմեական դարաշրջանները, ժառանգորդաբար անցնում են Արմավիր մայրաքաղաքից դեպի Արտաշատ (Ք.ա. 118-ից մինչև 4-րդ դար): Դվինը ժամանակագրական առումով միջնադարյան է, որը, ձևագոյանալով վաղ միջնադարից՝ 4-րդ դարից, վերապահորեն ձգվում է մինչև զարգացած միջնադար:

Աշխարհագրական առումով ատենախոսությունը կենտրոնանում է Արարատյան դաշտավայրի վրա:

Ինչ վերաբերում է հուշարձանապահպանության և թանգարանացման խնդիրներին, դրանք արդի և ժամանակակից հասկացություններ են: Աշխատանքում համապատասխանաբար շրջանառվում են 20-21-րդ դարերի ճարտարապետության զարգացումներն ու փոխաձևությունները:

Հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է պատմական հուշարձանների որակական վերլուծության և միջազգային զուգահեռների հետ համեմատության վրա:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը 134 էջ է, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և 112 անուն գրականության ցանկից՝ ներկայացված երեք լեզուներով (անգլերեն, ռուսերեն, հայերեն) և 36 էջ գրաֆիկական հավելվածից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ – ԱՐՄԱՎԻՐ, ԱՐՏԱՇԱՏ ԵՎ ԴՎԻՆ ՔԱՂԱՔԱՏԵՂԻՆԵՐԻ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական Հայաստանի վաղ շրջանի գրեթե բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, վաղ միջնադարում նաև Դվինը, գտնվում էին Արարատյան դաշտավայրում: Արարատյան դաշտում էր կենտրոնացված երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը:

Սույն ուսումնասիրության առարկա են հանդիսանում մասնավորապես Արմավիր, Արտաշատ և Դվին պատմական քաղաքատեղիները, ինչը պայմանավորված է դրանց պատմամշակութային ժառանգությամբ և աշխարհագրական դիրքով: Հարկ է նաև նշել, որ այս երեք քաղաքատեղիների ուսումնասիրությունը առանձնահատուկ է նրանով, որ ժամանակագրական առումով այն ներառում է մոտ 1500 տարվա պատմություն, և հնարավորություն է տալիս վերստեղծելու պատմական բավականին երկար ընթացք:

Հայտնի է, որ *Արգիշտիխինիլի* քաղաքը Վանի թագավորության վարչատնտեսական ու պաշտամունքային կարևորագույն կենտրոնն էր, որի ուսումնասիրության պատմությունը սերտորեն կապված է հետագայում նրա տարածքում կառուցված Հայաստանի հնագույն մայրաքաղաք *Արմավիրի* հետ:

Քաղաքը կառուցվել է Ք.ա. մոտ 776 թ. Արգիշտի Ա (Ք.ա. 786-764) թագավորի կողմից, Ուրարտուի ընդարձակման ընթացքում և անվանակոչվել է հիմնադրի անունով: Գոյատևել է Ք.ա. 8-5-րդ դարերում:

Երվանդունիների կողմից Արմավիրի հիմնադրումը՝ որպես Հայաստանի մայրաքաղաք, Արգիշտիխինիլի ուրարտական քաղաքի տեղում տեղի է ունեցել Ք.ա 4-րդ դ. երկրորդ կեսում, հավանաբար 330-ական թթ.:

Քաղաքատեղին Արարատյան դաշտի կենտրոնական հատվածում՝ Արաքս գետի ներկայիս հունից մոտ 5 կմ հյուսիս, ընդգրկում է Արմավիրի բլուրը, դրանից որոշ հեռավորությամբ սկիզբ առնող և 2,5 կմ դեպի արևմուտք ձգվող Սբ.Դավթի բլրաշարքը, դրա լանջերն ու ստորոտը: Այդ տարածքն ընկնում է ժամանակակից Հայկական, Արմավիր, Նալբանդյան, Նոր Ամասիա, Նոր Արմավիր և Ջրաշեն գյուղերի միջև և մոտավոր հաշվարկով գրավում է 300-400 հա տարածք:

Պաշտպանական առումով նպաստավոր երկու բարձունքները՝ հարթավայրի նկատմամբ 80 մ բարձրություն ունեցող Արմավիրի ընդարձակ բլուրը և 20-40 մ միջին բարձրությամբ Սբ. Դավթի բլրաշարքը, եղել են գլխավոր և թելադրող նախապայման Արգիշտիխինիլի քաղաքաշինական կառուցվածքի ձևավորման և հետագա զարգացման համար):

Առաջին հերթին հզոր միջնաբերդերով կառուցապատվել են Արմավիրի բլուրը (Արևելյան միջնաբերդ) և Դավթի բլրաշարքի արևմտյան առավել բարձրադիր հատվածը (Արևմտյան միջնաբերդ), որոնց միջև՝ բլրաշարքի երկայնքով, անցել է միջնաբերդերը միմյանց կապող գլխավոր փողոցը՝ բնակելի տների հոծ կառուցապատմամբ: Այսպիսով՝ ստեղծվել է մոտ 5 կմ երկարությամբ արևելքից արևմուտք ձգվող շեշտված առանցքով քաղաքաշինական հորինվածք, որի բարձրադիր ծայրամասերն ամրացվել են միջնաբերդերով:

Քաղաքի կառուցման տեղի ընտրության հարցում մեծ դեր է ունեցել նաև մոտակա Արաքս գետը, որտեղից Արգիշտի Ա-ն անցկացրել է ոռոգման համակարգ՝ ջրանցքի ստեղծման միջոցով: Այդ է վկայում Արգիշտի Ա-ի՝ դրա ակունքի մոտ պահպանված ժայռափոր արձանագրությունը: Ջրանցքը, պատմական բազմաթիվ նորոգումներով հանդերձ, գործում է մինչ այժմ:

Հնագիտական հետազոտությունների և վիմագրական նյութի հետ դրանց համադրության արդյունքում, պարզորոշ տարբերակվում են ուրարտական քաղաքի կառուցապատման երեք հիմնական շրջաններ, որոնք հաջորդաբար վերագրվում են Արգիշտի Ա, Սարդուրի Բ- (Ք.ա. 764-735) և Ռուսա Գ (Ք.ա.մոտ 605-595) թագավորներին: Հարկ է նշել, որ վերջին երկու արքաները, հիմնականում պահպանելով քաղաքաշինական նախնական կառուցվածքը, նոր պարիսպներով ընդարձակել են միջնաբերդի տարածքը, կատարել մոնումենտալ կառույցների նորոգման և վերականգնման աշխատանքներ:

Քաղաքի *արևմտյան միջնաբերդն* զբաղեցնում է Սբ.Դավիթ բլրաշարքի առավել բարձրադիր հատվածը: Այն պաշտպանական պարիսպ-ների մեջ երկու, իսկ հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերում երեք շարքով օղակել է բարձունքի գագաթն ու լանջերը: Վերջինի դեպքում, պաշտպանելուց բացի, այն ունեցել է նաև հենապատի դեր՝ բլրալանջերի նորաստեղծ հարթեցված դարավանդների կառուցապատման նպատակով:

Արևելյան միջնաբերդը, որ գրավում է շրջակա հարթավայրի նկատմամբ 80մ բարձրությամբ և խիստ թեք լանջերով Արմավիրի բլուրի գագաթը:

Արգիշտիխինիլիում պեղումներով բացահայտվել են բնակելի կառուցապատման հիմնական երկու տիպ: Առաջինը քաղաքի զարգացման և բարգավաճման ժամանակաշրջանին պատկանող մեծ և հարուստ առանձնատներն են՝ կառուցված Սբ.Դավթի բլրաշարքի գագաթով անցնող կենտրոնական փողոցի երկու կողմերում: Երկրորդը՝ քաղաքի անկնման շրջանում կառուցված Ս.Դավթի բլրաշարքի գագաթով անցնող կենտրոնական փողոցի երկու կողմերում: Այնուհետև՝ քաղաքի անցնման շրջանում կառուցված միջնաբերդի պարիսպը, երբ այն հավանաբար արդեն կորցրել է իր պաշտպանական դերը:

*Արտաշատ մայրաքաղ*աքը հիմնադրվել է Ք. ա. 180-170-ականներին (ըստ Ժ. Խաչատյանի Ք.ա 189/188 թթ.)՝ հայոց թագավորությունը վերականգնած Արտաշես Ա Բարեպաշտ արքայի կողմից, պատմական Հայաստանի Մեծ Հայքի Այրարատ աշխարհի հայոց Ոստան գավառում՝ Արաքս և Մեծամոր (Սև ջուր) գետերի հին հուների միախառնման տեղում՝ Արաքսի միջին հոսանքի ձախափնյա՝ Խոր Վիրապի բլուրների շրջակա հարավային, հարավարևելյան տարածքների վրա, որն անվանվել է Ար-տաշատ (հունարեն՝ Արտաքսատա)՝ իր իսկ Բարեգործ թագավորի անվամբ:

Հին Արտաշատի պատմությունը մարմնավորում է կրոնի պատմությունը Հայաստանում՝ ներառելով ուրարտական, հեթանոսական և քրիստոնեական շրջանները: Ասվածի վառ օրինակներն են ուրարտական ամրոցի պահպանված հետքերը, Միհրի բացահայտված տաճարի մնացորդները, Անահիտի տաճարի մասին պատմական հիշատակություններն ու Խոր Վիրապի գործող վանական համալիրը, որոնք խորհրդանշում են քաղաքի ձևագոյացման պատմությունը: Փաստ է, որ հեթանոսական աստվածներ Անահիտի և Միհրի պաշտամունքը ներկայումս ունի միայն պատմական արժեք, մինչդեռ Խոր Վիրապի վանական համալիրը խորհրդանշում է քրիստոնեության հաստատումը Հայաստանում:

Նախորդ տարիների ընթացքում պեղվել են 1-7 բլուրները, կենտրոնական թաղամասի պարիսպները, մասամբ բացվել են 5-րդ, 8-րդ բլուրները, ներքին համալիրը, ինչպես նաև՝ միջնաբերդի բլուրներից հարավ-արևմուտք՝ Արաքս գետի ձախ ափին տեղակայված պաշտամունքային համալիրը, Արևելյան, Հարավ-արևելյան և Արևմտյան դամբարանադաշտերը:

Քաղաքի տարածքային բաժանումն ըստ բլուրների ֆունկցիոնալ նշանակության հետևյալ պատկերն է ներկայացնում՝

- պալատական-վարչական,
- պաշտամունքային,
- արհեստավորաառևտրական,
- ռազմապաշտպանական և այլն,

• ըստ բնակչության սոցիալական կազմի ու իրավական վիճակի:

Դվինը Հայաստանի պատմական մայրաքաղաքներից մեկն է, որը հիմնադրվել է 4-րդ դարի առաջին կեսին՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակի (330-338) օրոք: Այն նույնպես գտնվում է Այրարատ նահանգի Հայոց Ոստան գավառում: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու՝ «դվին» բառը պարսկերեն ծագում ունի և նշանակում է բլուր:

Դվին քաղաքատեղին, որ շուրջ հազար տարի (4-13-րդ դդ.) եղել է երկրի վարչաքաղաքական, պաշտպանական, առևտրատնտեսական և մշակութային խոշոր կենտրոն, հիմնադրվել է 330-ականներին Արարատյան դաշտի հյուսիսային մասում՝ Գեղամյան լեռնաշղթայի հարավային ստորոտում՝ այն ժամանակ այդտեղով հոսող Ազատ գետի ձախակողմյան բլրի և նրան հարակից տարածքի վրա:

Միջնաբերդը քաղաքի հիմնադրման ժամանակ պարսպապատվել է միայն բլրի գագաթը՝ ընդգրկելով իր մեջ 0,5 հա տարածք, որտեղ կառուցվել են Արշակունիների և հետագա բոլոր դարաշրջանների պալատական և վարչական կառույցները: Հետագայում, միջնաբերդի ընդարձակման անհրաժեշտությամբ թելադրված, պարսպապատվել է ամբողջ բլուրն իր ստորոտի եզրագծով և մասամբ ընդգրկել նաև մի հատված հյուսիսային հարթավայրից: Պարիսպների ստորին մասերը մոտ 1մ բարձրությամբ անմշակ քարով են շարված, վերին մասերը՝ հում աղյուսով և արտաքինից երեսպատված թրծած աղյուսի մեկ շարքով:Միջնաբերդը բոլոր կողմերից շրջապատված է եղել պարսպին արտաքինից զուգահեռ փորված և ջրով լցված խանդակով:

Արևմտյան կողմում՝ խանդակից այն կողմ, տարածվել է, այսպես կոչված, *կենտրոնական թաղամասը*՝ քաղաքի հոգևոր կենտրոնը, որն ունեցել է իր առանձին պարիսպը՝ միջնաբերդին ուղղված դարպասով, և հաղորդվել է դրա հետ խանդակի վրա գցված կամրջով: Այդ հատվածում բացահայտվել են նաև դեպի կենտրոնական թաղամաս եկող ջրատարի խողովակաշարեր:

Դվին քաղաքատեղիի միջնաբերդում և կենտրոնական թաղամասում հնագիտական պեղումներով բացահայտվել են պատմաճարտարապետական մեծ արժեք ներկայացնող մի շարք կառույցներ, որոնցից չորսի ամրակայման և մասնակի վերականգնման խնդիրները ներառված են ներկա աշխատանքում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՔԱՂԱՔԱՏԵՂԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքամայր Անիի պեղումների հենքի վրա ձևավորված հայկական հնագիտական դպրոցի հիմնադիրների և նրանց աշակերտների ջանքերով (Ն. Մառ, Հ. Օրբելի, Աշխ. Քալանթար, Ս. Տեր-Ավետիսյան, Ե. Բայբուրդյան, Բ.Պյատրովսկի, Կ. Ղաֆադարյան, Բ. Առաքելյան) 20-րդ դարի առաջին կեսին հնագիտական հետազոտությունների ոլորտում ձեռք բերվեցին նշանակալից արդյունքներ, որոնք էլ իրենց հերթին դարձան Հայաստանում հնագիտության բնագավառի զարգացման նախապայմաններից մեկը:

Չնայած անկախության առաջին տարիների դժվարին պայմաններին՝ ՀՀ տարածքում հնագիտական հուշարձանների հետազոտություններն ու պեղումները երբեք չդադարեցվեցին: Այդ տարիներին պեղումները կազմակերպվում էին արտերկրի գիտական կենտրոնների հետ՝ համատեղ ծրագրերի շրջանակներում: Պետական ֆինանսավորման նվազման պայմաններում այս համագործակցության շնորհիվ ոչ միայն ապահովվեց հնագիտական հետազոտությունների շարունակականությունը, այլև դաշ-տային հետազոտությունների ոլորտում սկսեցին արմատավորվել նոր մոտեցումներ ու մեթոդներ:

Մշակութային ժառանգության քաղաքականության կարևորագույն հիմնահարցերից է օրենսդրական դաշտի բարելավումը, և բնականաբար սույն աշխատության մեջ չէինք կարող չանդրադառնալ ՀՀ անշարժ պատմական ժառանգության օրենսդրության բարելավմանը, հատկապես հնագիտական ժառանգության պահպանության լույսի ներքո:

Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը՝ Սահմանա-դրությունը, ամրագրում է, որ *«Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են»*: Ելնելով սույն դրույթից՝ աշխատության այս հատվածում ուսումնասիրության ենք ենթարկել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև՝ փորձ է արվել ներկայացնել օրենքի կարգավորման ոլորտից դուրս մնացած հարցերն ու խնդիրները:

Մեր օրերում կարևոր խնդիր է համարվում պատմական վայրերի պահպանության կազմակերպումը և հսկողության իրականացման հարցերը: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական մի-ջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է հստակեցնել «արգելոց» հասկացությունը, որովհետև գործող օրենքում սահմանված է միայն պատմամշակութային արգելոցը, իսկ ժամանակակից թանգարանագիտության մեջ «արգելոց» հասկացությունն ավելի ընդգրկուն է. այն ներառում է ոչ միայն հուշարձանների, այլև ոչ նյութական մշակութային ժառանգության, ինչպես նաև շրջակա միջավայրի

վերականգնումը: Արգելոց-թանգարանի առանձին տեսակներ ձեռք են բերում որակներ, որոնք նրանց ավելի մոտեցնում են էկոթանգարաններին ու կենդանի թանգարաններին:

20-րդ դարակեսից սկսած՝ հնագիտական պեղումների տարածքում գոյացան հնագիտական թանգարաններ բաց երկնքի տակ: Որպես կանոն, պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոները հուշարձանի ամրակայումից հետո ցուցադրվում էին տեղում՝ ցուցասրահների ներսում: Այս մոտեցումն ստեղծում էր իրական պատմական միջավայրում ներկա գտնվելու զգացում: Միաժամանակ առավելապես փորձում էին հուշարձանի թանգարանացման աշխատանքները ներդաշնակեցնել բնական լանդշաֆ-տին:

Ժամանակակից տեսական և կիրառական մշակումներում մշակութային լանդշաֆտները դիտարկվում են որպես մշակութային ժառանգության տարածքային համակարգերի ձևավորման հիմնակմախք՝ բաղկացած հատուկ պահպանվող տարածքներից, պատմական քաղաքներից, պատմամշակութային արգելոց-թանգարաններից և հատկապես մշակութային ու բնության ժառանգության բաղկացուցիչների համադրությամբ ստեղծված տարածաշրջանային ու ազգային պարկերից:

Տարեցտարի մեծանում է «միջավայրային» թանգարանների տեսա-կարար կշիռը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մշակութային զբոսաշրջության զարգացման գործում դրանք ստացել են առանցքային դերակատարում:

Ներկայումս ռուսական օրենսդրությամբ հնագիտական ժառանգու-թյան անշարժ օբյեկտների պահպանումը նախատեսված է պատմամշա-կութային արգելոցների և թանգարան-արգելոցների տեսքով:

Պատմահնագիտական թանգարանների համալիրների ձևավորման ռուսաստանյան փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու հնագիտական պարկերը՝ որպես ժառանգության օբյեկտների մեկնաբանման արդիական ձև, ինչպես նաև որոշելու հնագիտական պարկի կարևորագույն բաղադրիչները՝ թանգարանացված հուշարձաններ, պատմամշակութային բնապատկեր, պարկի տարածքի՝ տարբեր հետաքրքրաշարժ պատմական սյուժեների հիման վրա մշակված բազմամակարդակ երթուղիներ:

Այսպիսով միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ հնագիտական հուշարձանների թանգարանացման ժամանակակից սկզբունքներն ուղղորդվում են դեպի հնագիտական արգելոց-թանգարաններ և հնագիտական պարկեր:

Հուշարձանների պահպանությանն ու հանրահռչակմանն ուղղված փորձը մեր Առաջին, Երկրորդ և Երրորդ հանրապետություններում վկայում են ոչ միայն դրանց նկատմամբ համընդհանուր հոգածության, այլև նոր մոտեցումների և արդի պահանջներին համաձայն համալիր լուծումների անհրաժեշտության մասին: Հայաստանում հնագիտական թանգարանների

հիմնական տեսակը, անկախ դրանց կազմակերպա-իրավական ձևից, ցուցադրությունների համար նախատեսված կամ հարմարեցված սրահներով «կոլեկցիոն» թանգարաններն են: Նմանատիպ հնագիտական թանգարան-ների հիմնական գործառույթը մինչ օրս էլ գործնականում ուղղված է հնագույն, հին, միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված նյութական և հոգևոր մշակույթի, արվեստի նմուշների հավաքին, պահպանությանը, հանրահռչակմանը (Հայաստանի պատմության թանգարան, Երևանի պատմության թանգարան, երկրագիտական թանգարաններ և այլն): Այս իրավիճակը երկար ժամանակ բնորոշ էր նաև թանգարանային զարգացած տնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներին:

20-րդ դարի առաջին կեսին պատմամշակութային անշարժ հուշարձանների հենքի վրա ստեղծված մեծաքանակ «անսամբլային» բնորոշում ստացած թանգարանները թանգարանագիտության և հնագիտական ժառանգության պահպանության ոլորտում մի նոր փուլի սկիզբն էին ազդարարում: Հայաստանում այս փուլը նշանավորվեց Զվարթնոցի, Գառնիի, Մեծամորի, Էրեբունու՝ «անսամբլային» տիպի արգելոց թանգարանների ստեղծմամբ:

Հուշարձանների թանգարանացումը Հայաստանում մինչ օրս իրականացվել է հետևյալ տարբերակներով՝

1. հնավայրի և նրան կից թանգարանի շենքի ստեղծում՝ արգելոց-թանգարաններ (Զվարթնոց, Մեծամոր, Էրեբունի, Կարմիր բլուր, Շենգավիթ, Տիգրանակերտ);
2. հուշային թանգարաններ (Աբովյան, Իսահակյան, Խաչատրյան, Սարյան, Չարենց, Փարաջանով և այլն, վերջերս՝ Համո Սահյան);
3. կարևոր դեպքի, իրադարձության նվիրված հուշահամալիրի և դրա բնական միջավայրի թանգարանացում (Հաղթանակի զբոսայգի և «Մայր Հայաստան» թանգարան), Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Մուսա լեռան հերոսամարտի պատմության և մուսալեռցիների ազգագրության թանգարան;
4. արգելոցներ՝ պատմաճարտարապետական, պատմահնագիտական, բնության և այլն:

Այս թվարկած ձևերից բացի՝ 1980-ականներին առաջին անգամ մի ամբողջ քաղաքի տրվեց արգելոց–թանգարանի կարգավիճակ. դա Կումայրի արգելոց-թանգարանն է:

Կարևոր է ընդգծել նաև Արցախի Հանրապետության տարածքում գտնվող «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոցի օրինակը, որը ստեղծվել է դեռևս 2008 թ., որտեղ սահմանվել են քաղաքատեղիի միջավայրի և լանդշաֆտի պահպանության գոտիները՝ քաղաքի տարածքն առանձնացնելով որպես պատմաճարտարապետական արգելոց:

Այսպիսով փաստագրված են պատմական մայրաքաղաքներ Արտաշատ, Արմավիր, Դվինի հնագիտական հուշարձանների թանգարանացման նախադրյալներն ու ներուժը: Դրանց կիրառման ուղղությամբ թեև պետական մակարդակով կատարված են բավական վարչական և կազմակերպական քայլեր, սակայն քաղաքատեղիների պատշաճ արժևորումն օրապահանջ խնդիր է: Հայաստանի Հանրապետության տարածքում դեռևս չկա հնագիտական հուշարձանի թանգարանացման արդի միտումներին լիարժեքորեն համապատասխանող որևէ օրինակ, և վերոնշյալ երեք քաղաքատեղիների թանգարանացումը պատմամշակութային բնապատկերների լավագույն պահպանության ձև կարող է հանդիսանալ:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ԵՐԵՔ ՔԱՂԱՔԱՏԵՂԻՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Քաղաքատեղիների և դրանց առանձին կառույցների պահպանվածության ներկա վիճակը պայմանավորված է բնական և արհեստածին այն գործոններով, որոնք դարերի ընթացքում քայքայել կամ իսպառ ավերել են բնակելի, պալատական և պաշտամունքային շինությունները, նույնիսկ միջնաբերդ ամրոցների հաստահեղույս պարիսպները և այլն: Ամբողջական չի պահպանվել որևէ կառույց: Համեմատաբար լավ են պահպանվել պատերի և պարիսպների վերին մասերի փլվածքները և մնացած ստորին մասերը՝ գետնախարիսխները կամ հիմնապատերը:

Հայոց պատմության հնարավոր ամբողջական լուսաբանման համար սկզբունքային նշանակություն ունեն Վանի թագավորության շրջանի, Երվանդունիների և Արտաշեսյան դինաստիայի՝ Հայաստանի մշակույթների ժառանգական շարունակականության համապատկերը ներկայացնող հուշարձանների մերօրյա ուսումնասիրությունները: Դրանք հնարավորություն են տալիս գիտության ժամանակակից պահանջներին համապատասխան ուսումնասիրել և վերականգնել հնագույն և հին Հայաստանի բնակեցման համակարգի, բնաշխարհի յուրացման ու տարածքի կազմակերպման կառուցվածքի առանձնահատկությունները:

Վերջին տարիներին Հայաստանում մշակութային զբոսաշրջության ընտրված ուղի է Հայկական լեռնաշխարհում պատմականորեն ձևավորված հարավային առանցքի կամ միջանցքի ուղղությունը (Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզեր): ՀՀ կառավարությունը, կարևորելով երկրում զբոսաշրջության զարգացումը, ընդունել է հարավային ուղղության զարգացմանը միտված մի շարք ծրագրեր, որոնցում ներառված են նաև երեք քաղաքատեղիներից հատկապես պատմական Արտաշատի և Դվինի պահպանության վերաբերող հիմնախնդիրները:

Պատմական երեք քաղաքատեղիների թանգարանացման նախադրյալներն անմիջականորեն կապված են տվյալ վայրում կարևորագույն համալիրների և հուշարձանների, ինչպես նաև դրանց պահպանման գործընթացի հետ:

Ուսումնասիրելով մայրաքաղաքներ Արմավիրի, Արտաշատի և Դվինի ներկայիս վիճակը՝ կարելի է փաստել, որ դրանց ամրակայման և թանգարանացման խնդիրը խիստ արդիական է ոչ միայն որպես կարևորագույն պատմամշակութային հուշարձաններ, այլև շրջակա տարածքի և համայնքների կայուն զարգացումն ապահովող խթան և նախադրյալ: Այս հուշարձանների հավուր պատշաճի պահպանությունն ու թանգարանացումը որպես արդյունք հնարավորություն կտան զարգացնելու ենթակառուցվածքներ, խթանելու զբոսաշրջությունը, ինչպես նաև հանրահռչակելու հնադարյան բազմաշերտ, տարածաշրջանում երբեմնի ծաղկող մշակույթ ունեցող հայոց մայրաքաղաքները:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է ամփոփել, որ քաղաքատեղիի պահպանության և թանգարանացման ամենաարդյունավետ սկզբունքը արգելոց-թանգարանների ստեղծումն է: Այն ընդգրկում է հուշարձանների ճարտարապետատարածական կազմակերպման, մշտական բացօթյա ցուցադրության մշակման, այցելուների և զբոսաշրջիկների ընդունման, ինչպես նաև՝ ընթացիկ պեղումների անխափան իրականացման և արդյունքների գիտահետազոտական մշակման ապահովման համալիր խնդիրները: Այս նպատակով անհրաժեշտ է ցուցադրության գիտաճանաչողական ընդհանուր բովանդակության ամփոփում, քաղաքատեղիների և առանձին կառույցների ամրակայման, բարեկարգման և բացօթյա ցուցադրության կազմակերպում:

Հուշարձանի հետագա պահպանության և այցելուներին պատշաճ մակարդակով ցուցադրելու համար անհրաժեշտ է կատարել հետազոտական, ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ: Հնագիտական արգելոցների ձևավորման կարևոր պայման է նաև թանգարանացվող օբյեկտների միջև պատմական, տարածական, ժամանակային, մշակութային կապի հանգամանքը:

Հեռանկարային զարգացումն ապահովելու նպատակով լուծում է տրվել հետևյալ կարևորագույն խնդիրներին.

- հնագիտական ուսումնասիրությունների զարգացման, պեղվող հուշարձանների ամրակայման և վերականգնման;
- հուշարձանակիր տարածքների թանգարանացման, զբոսաշրջային երթուղիների մշակման, զբոսաշրջային ծրագրերում ներգրավման;
- հնագիտական ժառանգության պահպանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման;
- թվայնացման, քարտեզագրման;
- կադրերի պատրաստման;

- միջազգային համագործակցության ընդլայնման և մշակութային ժառանգության միջազգայնացման, հնագիտական պեղումների արդյունքների և ժառանգության հանրահռչակման;
- պատմամշակութային ժառանգության պահպանման իրավական հիմքերի ամրապնդման հարցերը:

Երեք հնավայրերում նախատեսված աշխատանքներին զուգընթաց՝ ներկայացվել են առաջարկություններ հեռանկարային զարգացման ծրագրերի, որոնց հիմքի վրա կմշակվեն նաև համաշխարհային պրակտիկայում հայտնի հուշարձան-ների կառավարման պլաններ: Հեռանկարային զարգացման ծրագրերը պետք է ներառեն՝

ա. պատմական տեղեկություններ հնագիտական վայրի/ հուշարձանի;

բ. հուշարձանի տարածքում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների;

գ. հնագիտական գտածոների պահպանությանն ու հաշվառմանն ուղղված աշխատանքների;

դ. հնավայրերի հանրահռչակմանն ուղղված աշխատանքների;

ե. տարածքների օգտագործման և զբոսաշրջության զարգացմանը միտված աշխատանքների վերաբերյալ տեղեկույթ:

Առաջարկ է ներկայացվել մշակելու նաև հնագիտական վայրերի կառավարման պլաններ, որոնք իրենց մեջ կներառեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա. հնավայրի և պատմական միջավայրի պահպանության իրավական հիմքերը (կոնվենցիաներ, միջազգային պայմանագրեր, օրենքներ, կարգեր, հրամանագրեր, որոշումներ և այլ իրավական ակտեր;

բ. հնավայրի և պատմական միջավայրի պահպանության տեսլականը;

գ. պահպանության նպատակները, պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, չափորոշիչները, գործողությունների ուղեցույցը;

դ. կառավարման համակարգը;

ե. հավելվածներ (պահպանական գոտիներ, կառուցապատման կարգավորման գոտիների, վերականգնման, ամրակայման, բարեկարգման նախագծեր և այլն):

Եզրակացություններ և առաջարկություններ

1. Պատմական բնակավայրերի մեծ քանակն ու խտությունը նկատի ունենալով՝ ՀՀ հնագիտական ժառանգության պատշաճ պահպանության և օգտագործման առավել ընդունելի մոտեցումներից է հնագիտական ազգային պարկերի ստեղծումը: Միաժամանակ «միջավայրային» թանգարանների ստեղծման համար առանցքային ենք համարում «պատմա-հնագիտական հուշարձան – թանգարանացում - ճանաչողական զբոսաշրջություն – թանգարանային-զբոսաշրջային սերվիս – թանգարանային-զբոսաշրջային բիզնես» միասնական հայեցակարգով ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Նման ծրագրի մշակման համար բացառիկ հնարավորություն են ընձեռում Հայաստանի պատմական մայրաքաղաքներ Արտաշատն ու Դվինը: Երկու հուշարձաններն էլ առանձնանում են քաղաքաշինական-հատակագծային կառուցվածքի, պաշտպանական ընդարձակ համալիրի, պաշտամունքային, զորանոցային, տնտեսական համալիրների, բնակելի թաղամասերի, դամբարանադաշտերի ինքնատիպ համադրություններով: Հանգամանք, որ թույլ է տալիս թանգարանացնել իրարից զգալի հեռավորության վրա գտնվող օբյեկտները և կապել դրանք միմյանց՝ հատուկ մշակված երթուղիներով: Մասնագիտական գրականության մեջ դրանք դիտարկվում են որպես «ձգված ճարտարապետատարածական ցուցադրություններ»:

2. Անդրադառնալով Արմավիր, Արտաշատ և Դվին մայրաքաղաքների պեղված հատվածների թանգարանացման հնարավորություններին՝ հատկապես կարևոր է նշել, որ երեք հնավայրերի մշակութային շերտերը: Բացված ճարտարապետական կառույցների մնացորդներն ըստ էության արտացոլում են տարածաշրջանի հնագույն հասարակությունների զարգացման ընթացքը պղնձի-քարի դարից մինչև ուշ միջնադար: Հնագիտական օբյեկտներով հարուստ տարածքների թանգարանացման ծրագրերում ներկայումս առաջնային պահանջ է համարվում թանգարանային-զբոսաշրջային կլաստերի ստեղծումը: Այն հնարավորություն է տալիս մեկ համակարգի մեջ ընդգրկելու թանգարանը, հնագիտական օբյեկտները, լանդշաֆտը, հնագույն և հին հասարակությունների կենսագործունեության որոշակի ոլորտների ցուցադրությունները, սննդի և ժամանցի զվարճությունների կազմակերպման ինդուստրիան:

Հնագիտական արգելոցների ձևավորման կարևոր պահանջներից մեկը թանգարանացվող հնավայրերի անմիջական հարևանությամբ զարգացած ճանապարհային ցանցի առկայությունն է, ինչն ունենք Արտաշատի և Դվինի պարագայում: Կարևոր պայման է նաև թանգարանացվող օբյեկտների միջև պատմական, տարածական, ժամանակային, մշակութային կապի առկայությունը:

3. Նկատի ունենալով հուշարձանների պահպանության ոլորտում վերջին տարիներին կատարված բազմաթիվ խախտումները, առաջարկվել է ստեղծել քաղաքատեղիների տարածքների պահպանական գոտևորման հստակ համակարգ՝ նկատի ունենալով նաև այդ տարածքում առկա արդի բնակավայրերի բնական կենսագործունեությանն անհրաժեշտ հողօգտագործման պայմանները, դնելով նաև որոշակի սահմանափակումներ: Քաղաքատեղիների պահպանական գոտիների համակարգի համար հարկ է մշակել հատուկ սահմանափակումներ, որոնք առավելագույնս չեն խաթարի հնագիտական շերտերը և անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտան հետախուզական հատվածական պեղումներ իրականացնել:

4. Պատմական, փաստական, մատենագիտական, բնօրինակ և այլ հետազոտությունները, ինչպես նաև հնագիտական հուշարձանների թանգարանացման ժամանակակից միտումների ուսումնասիրությունները թույլ են տվել եզրակացնելու, որ պատմական մայրաքաղաքներ Արմավիրի, Արտաշատի, Դվինի հնագիտական հուշարձանների թանգարանացման առավել արդյունավետ մեթոդը *արգելոց-թանգարանների* և թանգարանային-զբոսաշրջային կլաստերի ստեղծումն է, ընդ որում՝ Արտաշատը և Դվինը նախընտրելի է ընդգրկել մեկ միավոր արգելոց-թանգարանում:

5. Հուշարձանների պահպանության բնագավառը կարգավորող իրավական դաշտի համապարփակ ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում առաջարկվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես՝

- հնագիտական ոլորտին վերաբերող խնդիրների ներկայացում և կանոնակարգում,
- օրենքում օգտագործվող հասկացությունների և եզրույթների սահմանում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ պատմական երեք մայրաքաղաքների պահպանությունն ու թանգարանացումը կարևոր ձեռնարկ է մշակութային ժառանգության հանրահռչակման գործում, նպաստ է բերում երկրի տնտեսական զարգացմանը, քաղաքատեղիներին հաղորդելով նոր կարգավիճակ ու նշանակություն:

Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ.

1. Սամուելյան Ա. Հ. Պատմական բնակատեղիների թանգարանացման կազմակերպման խնդիրները// Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական աշխատություններ.- Երևան, 2018.- Հատոր III (70) - էջ 97-103:
2. Սամուելյան Ա. Հ. Հայաստանի պատմական բնակավայրերի պահպանության և թանգարանացման խնդիրները ժամանակակից թանգարանագիտության համատեքստում.// Պատմաբանասիրական հանդես.- Երևան 2019. - էջ 99-106:
3. Սամուելյան Ա. Հ., Արգիշտիխինիլի – Արմավիրի արևելյան միջնաբերդի և բնակելի հատվածի թանգարանացման խնդիրները. // Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական աշխատություններ. - Երևան, 2019.- հատոր II (73).- էջ 100-107:
4. Սամուելյան Ա. Հ., Արգիշտիխինիլի – Արմավիրի արևմտյան և պալատական համալիրի թանգարանացման խնդիրները. // Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական աշխատություններ. - Երևան, 2019.- հատոր II (73).- էջ 90-99:
5. Samuelyan A. The prospects of museification of archaeological heritage in Armenia (Main principles of preservation of historical Artashat). // “Aramazd” Armenian journal of near estern studies.- Yerevan Oxford,2019.- Volume XIII, Issue 1.- P. 153-159.
6. Սամուելյան Ա. Հ. Դվինի թանգարանացման հայեցակարգային մոտեցումներ. // Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տեղեկագիր 3 (64).- Երևան, 2019. - էջ 3-12:
7. Samuelyan A. Some of the problems of preservation of monuments in the current legislation of the Republic of Armenia. // Contemporary problems of Architecture and Construction.- Yerevan, Armenia, 2019.- P.148-153.

САМУЭЛЯН АРЕВ АРУТЮНОВНА
ВОПРОСЫ АРХИТЕКТУРНОЙ ОРГАНИЗАЦИИ ОХРАНЫ И МУЗЕЕФИКАЦИИ ИСТОРИЧЕСКИХ СТОЛИЦ АРМЕНИИ: АРМАВИРА, АРТАШАТА, ДВИНА

РЕЗЮМЕ

Настоящая диссертационная работа является актуальным исследованием в области архитектурной организации и музеефикации исторических поселений Армении, таких как Аргиштихинили-Армавир, Арташат и Двин. Следует отметить, что исследование проводилось на историко-археологической основе, что дает возможность не только рассмотреть развитие архитектурно-градостроительных пластов, но и проследить хронологию их создания и становления. Затрагиваемые в данной работе темы имеют в первую очередь прикладное значение. В частности, проблемы, рассматриваемые во второй и третьей главах диссертации, являются всесторонним исследованием в сфере законотворчества, и современной музеефикации, с применением архитектурных решений.

Хозяйственная деятельность на территории памятников, возрастающие объемы строительства, техногенные угрозы и естественные природные процессы неизбежно ведут к исчезновению археологических памятников. Во многом это связано не только с недостатками охраны культурного наследия, но и с не вовлеченностью памятников в процессах современного использования. Актуальность данной работы заключается в том, что большинство археологических памятников на территории Армении, нуждаются в новых формах экспонирования. Проведенный анализ показал, что основным методом сохранения археологического наследия, дающим представление об архитектурно-градостроительной культуре различных эпох, и реализации возможностей его экспонирования является показ памятников в неразрывной связи с ландшафтом в естественных условиях.

Данное исследование заполняет пробел, имеющийся в сфере охраны памятников культурного наследия, опираясь на международный опыт в вопросах музеефикации. Целью данной работы является архитектурная организация и последующая музеефикация армянских исторических столиц Армавир, Арташат и Двин основываясь на предлогаемых соответствующих реформах в законодательной сфере и существующих артефактах. Новизна данной диссертационной работы заключается в том, что впервые делается попытка имплементации исторического ресурса в хронологической парадигме

древних столиц Армавира, Арташата и Двина, а также предлагается концепция разработки методологии музеефикации, и дальнейшей актуализации данных исторических объектов. Расматриваются архитектурно-градостроительные принципы и формы экспонирования памятников археологичеккого наследия с целью их современного использования.

Диссертационная работа состоит из текстовой и графической частей. Текстовый объем работы состовляет 134 страницы и включает: введение, три главы, заключение и список из 112 наименований литературы. Графическая часть включает чертежи, фотографии, таблицы, схемы, всего на 36 листах.

В первой главе работы рассматриваются вопросы исторической периодизации древнеармянских поселений Аргиштихинили-Армавира, Арташата и Двина, а также их пространственно-архитектурные и археологические платформы. Во второй главе исследования разрабатываются концепты, связанные с охраной культурного наследия, и предлагаются законодательные решения. В третьей главе диссертации предлагаются практические решения по многим вопросам музеефикации вышеупомянутых поселений. В случае практической реализации проекта, подобная архитектурно-пространственная экспозиция градостроительного масштаба, может придать весомый импульс, и обеспечить устойчивое развитие туристической индустрии Армении.

Многокомпонентный процесс преобразования объектов археологического наследия в объекты музейного показа состоит из нескольких этапов: этап научного документирования, этап проектных работ, этап археологических изысканий, этап ввода подготовленного к музейному показу объекта в социокультурный оборот.

Представлены типы музеев «под открытым небом» (археопарк, образовательный историко-археологический комплекс, историко-археологический музей-заповедник), сформированных на основе комбинированных архитектурно-пространственных экспозиций, сочетающих музейные здания, памятники, инфо-центр, и окружающий ландшафт. Разработаны рекомендации для функционально-планировочной организации.

Таким образом, данное исследование охватывающее полный спектр аспектов затрагиваемой темы, может использоваться как практическое руководство для синхронизации решений в сферах - охраны культурного наследия, архитектурно-градостроительных решений, законодательных изменений, и развития туризма и экономики.

SAMUELYAN AREV HARUTYUN

The problems of architectural organization of preservation and museefication of historical capitals of Armenia: Armavir, Artashat, Dvin

SUMMARY

The present dissertation is an actual attempt to research some issues in the sphere of museefication and architectural organization, which is focused on such historical settlements of Armenia as Armavir, Artashat and Dvin. It should be mentioned that the research has been done on the historical-architectural basis, what can become a perfect opportunity not only to reveal the perspective of the development of these architectural layers, but to monitor the chronological overview of their creation and formation. The present work deals, especially, on such topics which have not so much theoretical performance, but they can be urgently applied into research field. In particular, we focus on the problems presented in second and third chapter of the study to reveal and implement an overall research in the field of legislation and modern museefication in accordance with architectural decisions.

The relevance of the present work is the fact that the vast majority of monuments of cultural heritage in Armenia are in poor state, which is expressed both in their architectural condition and in problems of institutional reforms of legislative systems. The present dissertation can fill the gaps, which is a necessary action for the preservation of cultural heritage, taking into consideration the international experience of the issue of museefication.

The goal of presented work is the architectural, spatial organization and the museefication of Armenian historical settlements of Armavir, Artashat and Dvin based on artifacts and in accordance with legislative acts . The novelty of the dissertation is that it is an attempt of implementation of historical resource in chronological paradigm of the indicated ancient capitals, as well as, the methodology of museefication and further actualization of the above mentioned objects.

The dissertation consists of introduction, three chapters and conclusion. The first chapter deals with the issues of historical periodization of ancient Armenian settlements of Armavir, Artashat and Dvin, as well as, with the questions of their dimensional – architectural and archeological platforms. The second

chapter reveals the concepts, which are used within cultural heritage presentation framework and legislation. The third chapter proposes the practical decisions on the issue of museefication of the above mentioned settlements, which can be used as a manual not only in the sphere of architecture, but in the field of legislative modifications, as well as the preservation of cultural heritage, the development of tourism and economy.

In the frames of the present research we propose the following types of open-air museums such as archeopark, educational historical-archeological complex and museum-reserve. Such types of museums are formed on the basis of combined architectural-spatial expositions, where one can have museums, restorated monuments, open space exposition, visit centre and surrounding landscape. All these objects can be presented and implemented on the territory of Armenia and become, as it was mentioned above, perfecte perspective for sustainable economic development of the country.